

## Կամակոր թագավորը

Լինում է, չի լինում՝ մի կամակոր թագավոր է լինում: Մի օր նա կանչում է իր **երկրի** բոլոր դերձակներին և հրամայում, թե ինձ համար մի այնպիսի վերմակ կարեք, որ հասակիս համեմատ լինի՝ ոչ **երկար**, ոչ կարճ: Ոչ մի դերձակ չի կարողանում թագավորի հրամանը կատարել, բոլորի գլուխներն էլ կտրել է տալիս:

Օրերից մի օր թագավորի մոտ մի դերձակ է գալիս:

- Թագավորն ապրած կենա, - ասում է նա, - ես քո ուզած վերմակը կկարեմ: Ոչ երկար կլինի, ոչ կարճ:

- Լավ, - ասում է թագավորը, - բայց տես, եթե մի փոքր երկար եղավ կամ կարճ, իմացած լինես՝ գլուխդ կտրելու եմ:

- Համաձայն եմ, թագավորն ապրած կենա, թե չկարողացա՝ գլուխս կտրի:

Դերձակը գնում է մի վերմակ կարում, դիտմամբ էլ մի քիչ կարճ է անում: Տանում է, դնում թագավորի առաջ: Փեշի տակ էլ թաքուն մի ճիպոտ է պահած լինում:

- Թագավորն ապրած կենա, - ասում է **դերձակը**, գլուխ տալով, - քո ուզած վերմակը կարել եմ: Տես՝ կհավանե՞ս:

- Տեսնենք հասակիս հարմա՞ր է, թե՞ ավել- պակաս, - ասում է թագավորն ու պառկում թաղտին, վերմակը քաշում վրան: Վերմակը հազիվ ծնկներին է հասնում, ոտքերը բաց են մնում:

Դերձակն իսկույն փեշի տակից հանում է ճիպոտը և խփում թագավորի ոտքերին:

- Թագավորն ապրած կենա, - **ասում է** դերձակը, - ամեն մարդ իր վերմակի համեմատ պիտի ոտքը մեկնի:

**Թագավորն ամիջապես ոտքերն իրեն է քաշում, թաքնում վերմակի տակ:**

Կամակոր թագավորն այլևս ոչինչ չի կարողանում ասել: Նույնիսկ մեծ - մեծ նվերներ է տալիս ու ճանապարհ դնում հնագետ դերձակին:

1. Տեքստի չորս բառերում տառի փոխարեն վանդակ է դրված, դու՛րս գրիր այդ բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը:

դերձակներին

կարճ

թաղտին

մարդ

2. Ի՞նչ է նշանակում **դերձակ** բառը.

Շոր կարող

3. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված.

ա/ գլուխը դատարկ - հիմար, անխելք, տգետ

բ/ թև առնել - ոգևորվել, ոգեշնչվել

գ/ կողը հաստ - համար, կամակոր, ինքնասածի

դ/ **ձեռք մեկնել - ձեռքով անել, հեռանալ**

4. Տրված բառերից ո՞րն է ածանցավոր.

